Կին և քաղաքականությունը

Անվճար հավելված

2013 մայիս

www.WomenNet.am

Կանայք ՏԻՄ-երում ներկա և ապագա հաջողությունների գրավականը. - լուրեր Սյունիքից և Վայոց ձորից

էջ 4

Մայիսի 5-ին կայացած ընտրությունների արդյունքներով՝ կանանց համամասնությունը Երևանի ավագանու կազմում 15,4 տոկոս է՝ 65 անդամներից 10-ը կին են:

Դե յուրե - դե ֆակտո

Կանայք մեկ տարվա ընտրական մարաթոնում

Մայիսի 5-ին կայացած Երևանի ավագանու ընտրություններով ավարտվեց մեկ տարի առաջ խորհրդարանական ընտրարշավով մեկնարկած մարաթոնը: Ինչպիսի՞ն էր կանանց մասնակցությունն այդ երեք ընտրություններում: Եվ ի՞նչ փոփոխությունների ենթարկվեց իշխանական բուրգը դրանց արդյունքում: Խոսենք միայն թվերով:

Այս տարվա սկզբին կայացած նախագահի ընտրություններում կանանց մասնակցությունը՝ գրանցված թեկնածուների կարգավիճակով զրոյական էր, իսկ չգրանցվածների շարքերում միայն մեկն էր, որ խիզախեց առաջադրվել: Թեպետ, եթե հավատանք Gallup International-ի նախընտրական հարցմանը, ապա կանանցից առնվազն 7 տոկոսը համաձայն է ստանձնել երկրի ղեկավարի պաշտոնը, եթե դա իրենց առաջարկվի: Խնդիրն այստեղ, ըստ երևույթին, այն է, որ նրանք պատրաստ չեն դրա համար պայքարի մեջ մտնելու, թեև անցյալ տարվա մայիսին կայացած խորհրդարանական ընտրություններում կանայք այդ հոգեբանական խոչընդոտը կարծես թե հաղթահարեցին: Փոփոխությունն ակնհայտ էր հատկապես մեծամասնական պայքարում. կին թեկնածուները, գուցե շատ չէին, բայց նրանք բավական բուռն և օրինակելի քարոզարշավներ տարան: Դրա հետ մեկտեղ համամասնականի հետ կապված սպասելիքները միայն կիսով չափ արդարացան, քան կարելի էր ակնկալել կանանց աջակցող 20 տոկոսանոց քվոտայի պարագայում:

Կանանց թիվն Ազգային ժողովում ավելացավ ընդամենը երկուսով, այն էլ՝ մեծամասնականի հաշվին, և այժմ ունենք 14 կին պատգամավոր 131-ից: Տոկոսային հարաբերակցությամբ 10,8 տոկոս է, ինչը աշխարհի խորհրդարաններում արձանագրված ամենացածր ցուցանիշներից մեկն է: Համեմատական առաջընթաց արձանագրեց միայն ՀՀԿ խմբակցությունը, որի կազմում կանանց թիվն աճեց նախորդ գումարման 3,1 տոկոսից մինչև այսօրվա 13%-ը:

Դրական փոփոխությունների շարքում կարելի է հիշատակել այն փաստը, որ խորհրդարանի ղեկավար կազմում այսօր չորս կին կա՝ մեկը փոխխոսնակի պաշտոնում, մեկը՝ խմբակցության ղեկավար և երկուսը՝ մշտական հանձնաժողովների նախագահ:

Անցյալ տարվա աշնանը կայացած տեղական ընտրություններում առաջընթացը չնչին էր՝ կանանց ներկայացվածությունը ավագանիների կազմում բարձրացավ ընդամենը երկու կետով՝ դառնալով 8,4 տոկոս: Ճիշտ է, որոշ մարզերում զգալի հաջողություններ արձանագրվեցին, հատկապես Սյունիքում, որտեղ կանանց թիվը ավագանիներում 17,4 տոկոս է: Դրա հետ մեկտեղ բոլոր մարզերում նոսրացան առանց այդ էլ սակավաթիվ կին գյուղապետների շարքերը, նրանք ընդամենը 2,2 տոկոս են կազմում, այն դեպքում, երբ Հայաստանը «Հազարամյակի զարգացման նպատակների» շրջանակում պարտավորություն է ստանձնել՝ մինչև 2015 թվականը կանանց թիվը համայնքների ղեկավարների կազմում 10 տոկոսի հասցնել: Ասենք նաև, որ 48 քաղաքային համայնքների ղեկավարների թվում կանայք այս անգամ էլ ի հայտ չեկան:

Վերջին բաստիոնը Երևանի ավագանու ընտրություններն էին… Եվ այստեղ սպասելիքները բավական մեծ էին՝ հաշվի առնելով համամասնական ցուցակների համար օրենսդրորեն սահմանված 20%-անոց քվոտան: Մայիսի 5-ի ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած յոթ քաղաքական ուժերի համամասնական ցուցակներում կանանց թիվը միջինը 24 տոկոս էր կազմում:

«Առաքելություն» կուսակցության ցուցակում կանայք 28% էին, «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունում (ՀԱԿ)՝ 26%, «Օրինաց երկիր» (ՕԵԿ), «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ) կուսակցությունների և «Բարև, Երևան» դաշինքի ցուցակներում՝ 25-ական տոկոս, Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) և Հայաստանի հանրապետական (ՀՀԿ) կուսակցությունների ցուցակներում՝ 22% և 20% համապատասխանաբար:

Բոլոր ցուցակների առաջին տասնյակում ընդամենը 13 կին էր ընդգրկված: Նշված ուժերից որևէ մեկի ցուցակը կին չէր գլխավորում, թեև լուրեր էին շրջանառվում, թե ՀՅԴ անդամ, նախորդ գումարման ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանին ընդդիմության միասնական ցուցակը ղեկավարելու առաջարկ էր արվել: Բայց իրադարձություններն այլ կերպ զարգացան:

Շարունակությունը՝ էջ 2

Զայն բազմաց

Քաղաքային տրանսպորտի խնդիրն առավել մտահոգում է կանանց, քան տղամարդկանց

Էկոլոգիան, տրանսպորտը և բնակկոմունալ ծառայությունները՝ սա է երևանցիներին առավել մտահոգող հիմնախնդիրների եռյակը ընտրություններից առաջ Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի կողմից կատարված հարցման արդյունքներով:

Ասոցիացիայի նախագահ Գևորգ Պողոսյանը մեզ հետ զրույցում մանրամասնեց, որ, օրինակ, հասարակական տրանսպորտի գործունեությունն ավելի շատ մտահոգում է մայրաքաղաքի բնակիչ կանանց, քան տղամարդկանց: Հարցման արդյունքներով՝ կանանց 20 տոկոսն է համարում, որ Երևանի համար կարևորագույն հարցը հասարակական տրանսպորտն է, մինչդեռ այդ հարցը ամենակարևորն է համարում տղամարդկանց 16 տոկոսը:

«Միգուցե կանայք ավելի շատ են երթուղային տաքսիներով շրջում, ուստի նրանց համար այդ խնդիրն ավելի կարևոր է, քան, նույնիսկ, էկոլոգիան»,- կարծում է Պողոսյանը:

Ընդհանուր առմամբ քաղաքային տրանսպորտը որպես ամենակարևոր հիմնախնդիր նշել է հարցման մասնակիցների 17,8 տոկոսը, իսկ 21,8 տոկոսը Երևանի ամենակարևոր խնդիր է համարել էկոլոգիան: Ընդ որում, էկոլոգիայի խնդիրը առավել կարևոր է հարցված տղամարդկանց 24 տոկոսի, իսկ կանանց՝ 19 տոկոսի համար:

Բնակկոմունալ ծառայությունների հետ կապված հիմնախնդիրներն առավել կարևորել է հարցվածների 16 տոկոսը: Դրանք ամենակարևորն է դիտարկել կանանց 17 տոկոսը, իսկ տղամարդկանց 14,3 տոկոսը:

Մյուս հիմնախնդիրների դեպքում տղամարդկանց ու կանանց կարծիքների տարբերությունը չնչին է եղել:

Նշենք, որ հանրային կարծիքի հարցումն անցկացվել է Երևանում ապրիլի 19-25-ը: Հարցմանը մասնակցել է ընտրելու իրավունք ունեցող Երևանի 1000 չափահաս բնակիչ:

Փաստաշար

Ընդունվեց գենդերային արդարություն հաստատող օրենքը

Մայիսի 20-ին Ազգային ժողովում երրորդ և վերջնական ընթերցմամբ ընդունվեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի նախագիծը: Օրենքն անցավ 108 կողմ, 1 դեմ և 8 ձեռնպահ ձայներով:

Նշենք, որ օրենքի նախագծի այս տարբերակը ԱԺ-ում շրջանառության մեջ էր 2011-ից, առաջին ընթերցմամբ ընդունվել էր դեռ նախորդ գումարման օրոք՝ 2012-ի փետրվարին, իսկ երկրորդ և երրորդ ընթերցումները կայացան արդեն նոր՝ հինգերորդ գումարման խորհրդարանում:

Օրենքը, որն ըստ էության ամրագրում է գենդերային հավասարության սկզբունքը, ուժի մեջ կմտնի ՀՀ նախագահի ստորագրելուց հետո:

Երևանը թվերով

Հայաստանի յուրաքանչյուր 3-րդ բնակիչն ապրում է Երևանում: Բնակչության խտությունը մայրաքաղաքում 5 314 մարդ/կմՀ, և այդ ցուցանիշով մենք կարող ենք համեմատվել Լոնդոնի և Մադրիդի հետ:

Երևանի մեկ բնակչին բաժին է ընկնում մոտ 7 քմ կանաչ տարածք, միջինում ընդունված չափից 3 անգամ պակաս: Իսկ զբոսայգիներն ու պուրակները կազմում են մեր քաղաքի ընդհանուր մակերեսի ընդամենը 3%-ը: Համեմատության կարգով՝ Լոնդոնում զբոսայգիներն ու պուրակները կազմում են քաղաքի ընդհանուր մակերեսի 38%-ը, իսկ Նյու Յորքում՝ 14%-ը:

Նախարարների նոր հին կաբինետը

Նախագահի ընտրություններից հետո ձևավորված կառավարության կազմում կանանց մասնակցության առումով փոփոխություններ չեն արձանագրվել: 18 նախարարներից կազմված նոր կաբինետում, ինչպես և նախորդում երկու կին նախարարներ կան՝ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը և մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:

56 փոխնախարարներից միայն 7-ն են կին՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում՝ Ջեմմա Բաղդասարյանը և Սոնա Հարությունյանը, էկոնոմիկայի՝ Կարինե Մինասյանը, կրթության և գիտության՝ Կարինե Հարությունյանը, մշակույթի՝ Արև Սամուելյանը, ֆինանսների՝ Լիանա Հունանյանը և քաղաքաշինության նախարարությունում՝ Ռուզան Ալավերդյանը:

Կառավարությանն առընթեր 7 մարմիններից և ոչ մեկի ղեկավարը կին չէ: Մարզպետների թվում էլ կանայք բացակայում են:

Դե յուրե-դե Ֆակտո

Կանայք մեկ փարվա ընտրական մարաթոնում

Սկիզբը՝ էջ 1-ին

Ընտրությունների արդյունքում կանանց համամասնությունը Երևանի ավագանու կազմում 15,4% է՝ ավագանու 65 անդամներից 10-ն են կին:

Հիշեցնենք, որ մայրաքաղաքի նախորդ ավագանու կազմում ընդամենը 5 կին էր ընդգրկված. չորսը՝ ՀՀԿ խմբակցության, մեկը՝ ԲՀԿ կազմում:

Փաստորեն, կանանց թիվը մայրաքաղաքի ավագանիում կրկնակի աճել է: Սակայն կարելի՞ է արդյոք խոսել առաջընթացի մասին: Երևի թե ոչ, հատկապես եթե հաշվի առնենք այն մետամորֆոզները, որ տեղի ունեցան հետընտրական շրջանում:

Ընտրությունների նախնական տվյալներով՝ կանանց թիվը պետք է 13-ից պակաս չլիներ, և այդ դեպքում ավագանու կազմում կպահպանվեր Ընտրական օրենսգրքով ամրագրված 20 տոկոսանոց քվոտան: Սակայն ընտրություններից անմիջապես հետո ԿԸՀ ներկայացված ինքնաբացարկի դիմումների հիման վրա ուժը կորցրած ճանաչվեցին «Բարև, Երևան» դաշինքի մեկ, ԲՀԿ համամասնական ցուցակի 113, ՀՀԿ 21 թեկնածուների գրանցումները:

Թեպետ ինքնաբացարկների հետևանքով ամենաարմատական փոփոխության ենթարկվեց ԲՀԿ համամասնական ցուցակը, սակայն կանանց ներկայացվածությունը խմբակցության կազմում սկզբնական ցուցակի համեմատ գրեթե չի նվազել:

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության 17 անդամներից 4-ը կանայք են (23,5%)՝ Թամարա Պողոսյան, Իրինա Քոչարյան, Արմինե Գյուլզադյան, Էվելինա Խաչատրյան:

Իսկ ահա ՀՀԿ խմբակցության կազմում կանանց թիվը սկզբնական ցուցակի համեմատ գրեթե կիսով չափ նվազել է.

ՀՀԿ խմբակցության 42 անդամներից 5-ն են կանայք (11,9%)՝ Աստղիկ Գևորգյան, Աննա Ասատրյան, Նաիրա Նահապետյան, Նատալյա Լափաուրի, Ռոզա Սիրունյան:

«Բարև, Երևան» խմբակցությունն ավագանիում ունի մեկ կին անդամ (16,6%)՝ ի դեմս Անահիտ Բախշյանի:

Իրականում ստացված պատկերը վկայում է, որ քվոտան դարձյալ չի տվել ցանկալի արդյունքը: Պատճառը նույնն է, ինչ խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Ըստ էության ինքնաբացարկները չեզոքացնում են քվոտայի մեխանիզմը, քանի որ մանդատից այս կամ այն պատճառով հրաժարվող կնոջ տեղը տղամարդ է զբաղեցնում: Մինչդեռ տրամաբանական կլիներ, որ կնոջը փոխարիներ ցուցակով հաջորդ կինը, ու այդ դեպքում քվոտան կպահպանվեր: Համենայն դեպս, գոնե այս պահին ակնհայտ է, որ պետք է կանոնակարգել ինքնաբացարկի մեխանիզմը՝ կինը կնոջ փոխարեն սկզբունքը հաշվի առնելով: Թեպետ դա հաջորդ ընտրություններում կանանց առաջընթացն ապահովելու միակ ու բավարար նախապայմանը չէ… Անելիքներ շատ կան…

Տեսակետ

…Ինձ համար կարևորը մարդն է: Հրաշալի է, երբ քաղաքի փողոցները բարեկարգվում են, բայց, կարծում եմ՝ ամեն ինչ պետք է սկսել քաղաքացուց: Հասարակ քաղաքացին պետք է զգա, որ ինքը գնահատված է: Պետք է այնպես անել, որ յուրաքանչյուրը զգա, որ պետությունն իր մասին հոգ է տանում: Ցանկացած ծրագրի հասցեատերը պետք է լինի քաղաքացին: Փողոցում քայլելիս էլ մարդը պետք է զգա, որ ինքը արժեք է այս պետության համար: Ուզում եմ, որ երևանցիներն արժանապատիվ կյանքով ապրեն: Ուզում եմ՝ այնպիսի մթնոլորտ լինի, որ յուրաքանչյուր մարդ հասկանա՝ Երևանն իր տունն է:

Գայանե Մանուկյան,
ՀՅԴ ԳՄ հաղորդակցության և հանրային կապերի պատասխանատու

Կարծիքների խաչմերուկ

Վարդագույն քաղաքն ու մայրիկների մտահոգությունները

Մենք զրուցում ենք նաև փոքր երեխաներ ունեցող մայրիկների հետ՝ լսելով նրանց մտահոգություններն ու առաջարկությունները՝ մեր քաղաքն ավելի հարմարավետ դարձնելու վերաբերյալ:



«Փողոցներն ահավոր վիճակում են, կես ժամ անձրև է գալիս, տնից դուրս գալ չի լինում: Երեխաները մինչև դպրոց են հասնում, ոտքից գլուխ ցեխ են դառնում»,- ասում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բնակիչ, տնային տնտեսուհի, երեք երեխաների մայր 40-ամյա Արմինեն: Բացի այդ, նրա խոսքով՝ իրենց թաղամասում մի այգի չկա, որ երեխաների հետ երեկոյան գնա, զբոսնի, պետք է գումար ծախսես, հասնես հարմար տեղ: Երեք երեխայի հետ զբոսանքի գնալու համար պետք է միայն տրանսպորտի համար առնվազն 800 դրամ ունենաս, էլ չեմ հաշվում մնացած բաները:

Այգիների ու կանաչի պակասից բողոքում է նաև Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մեկ այլ բնակչուհի Կարինեն: «Այստեղ այգիները բետոնապատում են, սալիկապատում, չկա կանաչ տարածք, որտեղ կարելի է երեխաների հետ նստել: Ֆիլմերում տեսնում ենք, չէ՞, Եվրոպայի ու Ամերիկայի քաղաքներում՝ մեծ ու փոքր դրսում՝ կանաչի վրա նստած, սփռոցը փռած, մաքուր օդում սնվում են, պառկում, կարդում: Ինչո՞ւ մեզանում նման բան չկա»,- ասում է դժգոհեց Կարինեն՝ ավելացնելով, որ կանաչի փոխարեն այգիներում օր օրի ավելանում են կարուսելներն ու անպետք խաղալիք, արևածաղիկ ու այլ բաներ վաճառողները:

Նա միաժամանակ դժգոհում է, որ գրեթե ամեն ինչ՝ թատրոնները, ժամանցի վայրերը, կրթական հաստատությունները, Երևանի կենտրոնում են: «Արդեն մի քանի շաբաթ է, քոլեջ եմ փնտրում մեր համայնքի տարածքում, որտեղ շաբաթ և կիրակի կարելի է երեխաներին տանել պարապմունքների: Մեծ մասը կենտրոնում է: Երեխային թատրոն տանելու համար պետք է մեկ ժամ ճանապարհ գնաս ու հետ գաս, այն էլ՝ այս վիճակում գտնվող երթուղային տաքսիներով: Էդքանից հետո ստացվում է երեխայի ժամանցն ապահովելու փոխարեն նրան լավ հոգնեցնում ես»,- նկատեց մայրիկը:

Սառա Խոջոյանը լրագրող է, երկու երեխաների մայր՝ 3-ամյա Ավետն ու մեկ տարեկան Շուշին: Ապրում է Էրեբունի վարչական շրջանում, որտեղ, իր իսկ խոսքով, խաղահրապարակներ գրեթե չկան, փողոցները նեղ են, մայթեր չկան, այս պարագայում շատ վտանգավոր են արագընթաց մեքենաները, քանի որ երեխաները կարող են հաճախ փողոցը մայթից չտարբերել: Նա առաջարկում է նման դեպքերում փողոցը մայթից տարանջատող ինչ-որ ցանկապատ տեղադրել:

Ասում է, որ մայրիկները շուտ գնահատեցին քաղաքում թեքահարթակների հայտնվելը, չէ՞ որ նրանք հարմարավետ են ոչ միայն սահմանափակ կարողություններով մարդկանց, այլ նաև մանկասայլակներով զբոսնող ծնողների համար: Բայց նման թեքահարթակներ ամեն տեղ չէ, որ կան, իսկ քաղաքի ծայրամասերում գրեթե բացակայում են: Այնպես որ, կանայք հաճախ ստիպված են մանկասայլակը կա՛մ գրկած իջեցնել, կա՛մ էլ երեխայի համար իսկական երկրաշարժ կազմակերպել:

Սառայի ու աշխատող մյուս մայրերի համար բարդ է երեխային մանկապարտեզ ընդունելու հարցը: Խոսքը պետական մանկապարտեզների մասին է, որտեղ երեխային ընդունելու համար պետք է ամիսներ առաջ հերթագրվել ու սպասել քո հերթը հասնելուն: «Երևանում ամեն օր ինչ-որ շենքեր են կառուցում, թող մի երկու մանկապարտեզի շենք վերանորոգեն, որպեսզի խնդիրը լուծում ստանա»,-առաջարկում է լրագրող մայրիկը:

ՄԻՊ աշխատակազմի խոցելի խմբերի պաշտպանության և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության վարչության պետ, երեխաների իրավապաշտպան Սիդա Մուրադյանի (նա նույնպես մայր է) գնահատմամբ՝ այսօր Երևանում դրականն ու բացասականը միախառնված են:

«Երբ դպրոցական տարիներին շարադրություն էինք գրում «Մեր վարդագույն քարի քաղաքը» վերնագրով մի տեսակ հպարտություն էի զգում, այսօր այդ նույն բառերը շատ մտահոգիչ են… Մտահոգված եմ իմ երեխայի, բոլոր երեխաների ու մեր համաքաղաքացիների համար: Մի կողմից՝ այսօր կառուցվում են նոր շինություններ՝ ապահովելով մարդկանց աշխատատեղով և բնակարաններով, մյուս կողմից՝ այդ շինարարական աշխատանքների ընթացքում ծառեր են հատվում: Կամ՝ մանկապարտեզներն այսօր անվճար են, և սոցիալական բոլոր խավերը հնարավորություն ունեն երեխաներին նախադպրոցական կրթություն տրամադրել, միաժամանակ այդ նույն մանկապարտեզներում երեխաների թիվը սահմանված չափի կրկնապատիկն է… Նոր ավտոբուսներ են ներմուծվել, բայց նրանցից ոչ մեկը հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին…»

Եվ ոչ միայն վերջինների համար: Մեր հասարակական տրանսպորտը նախատեսված չէ նաև մանկասայլակով երթևեկելու համար: Իսկ առևտրի մեծ կենտրոններում ու նույնիսկ ամենաշքեղ սուպերմարքեթներում չկան զուգարաններ, էլ չենք ասում երեխաների համար նախատեսված սենյակներ կամ գոնե հարմարանքներ, որ մայրերն անհրաժեշտության դեպքում կարողանան իրենց նորածին փոքրիկներին փոխել կամ կերակրել: Ինչպես նշում է մեր զրուցակից Սուսաննա Դ.-ն, ի պատասխան այս դիտարկմանը, իրեն, որպես կանոն, խորհուրդ են տալիս նստել տանը՝ փոքրիկի հետ խանութներով շրջելու փոխարեն…

Ցավալին այն է, որ մարդիկ համակերպվում են ապրել ոչ հարմարավետ քաղաքում և տներում՝ նույնիսկ չփորձելով պահանջել ավելին…

Փորձագետի անկյուն

«Սա Երեւանն է, այստեղ մենք տանն ենք»

Կարինե Դանիելյան. «Դժվար է, բայց դեռ հնարավոր է ուղղել անցյալում գործած սխալները…»

Կառուցապատումը խեղդում է մեր քաղաքի այգիները, միայն Օղակաձեւ այգում բնապահպանները հաշվել են 96 կառույց՝ սրճարան, խանութ, ռեստորան եւ այլն…

«Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի նախագահ, էկոլոգ Կարինե Դանիելյանը մայրաքաղաքի խնդիրներից առանձնացրեց քաղաքաշինության ոլորտում առկա իրավիճակը:

«Դժվար է ուղղել այն սխալները, որոնք արդեն եղել են՝այդ հսկա շինությունները, որոնք շարվել են իրար վրա քաղաքի կենտրոնում: Քիչ հավանական է, որ կարելի է դրանց հարկերը քչացնել կամ ինչ-որ ուրիշ բան անել: Բայց կարելի է գոնե այդ որդեգրած սարսափելի ճանապարհը չշարունակել: Շատ գեղեցիկ էր մեր թամանյանական Երևանն իր կանաչ տարածքներով, ներդաշնակ ճարտարապետությամբ: Իսկ հիմա քաոս է Երևանում: Միգուցե դեռ հնարավոր է մի փոքր շտկել այդ սխալները»,- ասաց Դանիելյանը:

Անդրադառնալով իր համար ամենացավոտ՝ կանաչ տարածքների խնդրին՝ նա նշեց, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում բոլոր կուսակցություններն էլ անդրադառնում էին Երևանի բնապահպանական խնդիրներին, կանաչ տարածքներին: Լուծումներից մեկն իր կարծիքով այն է, որ քաղաքը պետք է շրջապատվի կանաչ գոտիներով.

«Բացի այդ, շատ քչերն են խոսում ուղղաձիգ կանաչապատման մեծ հնարավորությունների մասին: Դա եղել է, բայց հենց առաջին հարկերը, նկուղները բաժանեցին բիզնեսի համար, համարյա բոլորը արմատները կտրտեցին, և դրանով այդ խաղողների վերջը տրվեց: Դա պետք է վերականգնել: Գետառը բացել, որի վրա հիմա ռեստորաններ են շարել…»

Ինգա Զարաֆյան. «Հավատում եմ ոչ թե քաղաքական ուժերի ծրագրերին, այլ իմ աչքերին»

«Բացի ծառեր տնկելուց, որը կանոնավոր բնույթ չունի, և քաղաքի ոռոգման համակարգի մասնակի բարելավումից, Երևանի քաղաքապետարանը ուրիշ ոչինչ չի առաջարկում: Այս ամենին հակադրվում են զավթվող կանաչ տարածքները, Երևանի մերձակայքի քարհանքերը, Հրազդանի աղտոտված կիրճը քաղաքի կենտրոնում, անընդհատ աճող աղբի ծավալները և ավտոմեքենաների թունավոր արտանետումները»,- ասում է «Էկոլուր» ՀԿ նախագահ Զարաֆյանը:

«Երևանի շուրջ եղած կանաչ գոտին, որն էլ ապահովում էր քաղաքի էկոլոգիան, ոչնչացվել է դեռևս 90-ականներին: Այժմ շատ դժվար է այն վերականգնել: Փոխարենը՝ վերջին հինգ տարիները բնութագրվում են բակերում կանաչ զոտիների ավելացմամբ, որոնք միկրոկլիմայի փոքրիկ օազիսներ են, սակայն ընդհանուր առմամբ խնդիր չեն լուծում»,- նշում է փորձագետը:

Երկրորդ պրոբլեմատիկ գոտին Հրազդանի կիրճն է, որը շունչ է տալիս ամբողջ քաղաքին.

«2006-ին բնապահպանության նախարարությունը խոստացավ կանգնեցնել կիրճում սկսված շինարարությունը, փոխարենը ներկայումս Հրազդանի կիրճը երկու կողմից շրջապատված է ռեստորաններով, որոնք մեծապես նվազեցնում են այս կարևոր կանաչ օջախի արդյունավետությունը»:

Ավագանու ամբիոն

Ինչպիսի՞ Երեւան են ուզում տեսնել նորընտիր ավագանու կին անդամները

Ո՞ր խնդիրներն են կարևորում մայրաքաղաքի նորընտիր ավագանու կազմում ընդգրկված երեք խմբակցությունների կանայք, ի՞նչ նախաձեռնություններով են պատրաստվում հանդես գալ առաջիկա չորս տարվա ընթացքում, ի՞նչ նպատակներ են իրենց առջև դրել… Մենք խնդրեցինք նրանց նշել իրենց տեսանկյունից առավել կարևոր ու հրատապ հիմնախնդիրները…

Աստղիկ Գևորգյան. «Ավելի լավ Երևան» գաղափարը վերաբերում է ոչ միայն կենտրոնին»

Ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գևորգյանը ավագանու վերընտրված անդամներից է: Ասում է, որ իր աշխատանքը կառուցելու է՝ նախընտրական շրջանում մայրաքաղաքի բնակիչների հետ հանդիպումների ժամանակ բարձրաձայնված խնդիրները հիմք ընդունելով:

- Ավելի լավ Երևան ունենալու գլխավոր նախապայմանը համաչափ զարգացումն է: Նուբարաշենը, էրեբունին, մնացած այլ հատվածները նույնպես պետք է բարեկարգվեն ու կանաչապատվեն: Քարոզարշավի ընթացքում այցելել եմ Նուբարաշեն, զրուցել տեղի բնակիչների հետ: Նրանք ապրում են աղբի հարևանությամբ, և մեր հանդիպումը, կարելի է ասել, աղբանոցի շրջակայքում էր: Դա սարսափելի է: Անթույլատրելի է, որ 21-րդ դարում նման պատկեր լինի: Դրա համար էլ որպես կարևորագույն խնդիր առանձնացնում եմ աղբահանությունն ու աղբամշակման գործարանի ստեղծումը: Այս ուղղությամբ բավական լուրջ քայլեր արդեն իսկ կատարվում են, օտարերկրյա ներդրողների հետ եղել են հանդիպումներ, պայմանավորվածություն, և ես մեծ հույս ունեմ, որ Երևանը շուտով կազատվի այն աղբակույտերից, որոնք տգեղացնում և նսեմացնում են մեր մայրաքաղաքը: Նուբարաշենցիների հետ հանդիպման ժամանակ Տարոն Մարգարյանն էլ խոստացավ, որ աղբահանությունն օրակարգային հարց է և օր առաջ պետք է լուծում ստանա…

Որպեսզի մեր քաղաքն ավելի լավը դառնա, անելիք ունեն նաև երևանցիները: Հաճախ եմ քայլում Երևանի փողոցներով: Հավատացե՛ք, առավոտյան մայրաքաղաքի փողոցները մաքուր են, ավլած, սակայն քաղաքացիները նախընտրում են աղբը գցել ոչ թե աղբամանի մեջ, այլ՝ գետնին: Գեղեցիկ ու ճաշակով նստարանները երևանցիների համար փրկություն են, բայց ի՞նչ են անում քաղաքացիները՝ աղբը թողնում են նստարանին, փչացնում գույքը: Յուրաքանչյուր երևանցի պետք է տեր լինի իր քաղաքին:

Թամարա Պողոսյան. «Երևանը դարձնենք համայն հայության երազանքի քաղաք»…

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի նախկին գործադիր տնօրեն, մշակույթի նախկին նախարար Թամարա Պողոսյանը միակ կինն է, որ մայրաքաղաքի ավագանիում, ամենայն հավանականությամբ, խմբակցություն է ղեկավարելու:

Դեռ նախընտրական փուլում մեզ հետ հարցազրույցում ասել էր, որ համամասնական ցուցակով պայքարը թիմային է, և յուրաքանչյուրն ունի որոշակի լիազորություններ այդ պայքարին մասնակցելու և ամբողջ ներուժը ներդնելու համար: Իսկ երբ կուսակցությունն ունենում է որոշակի արդյունք, ապա ունեցած հաջողությունները թիմի որոշմամբ բաշխվում են, այնպես որ վերջնական խոսքը թիմինն է, և իր մասով իր համար կլինի վերջնական, ինչպիսին էլ որ լինի:

- Երևանը իրոք մեր տունն է, այլ ոչ թե շենքերի ու շինությունների ինչ-որ անշունչ համայնապատկեր, Երևանը կենդանի օրգանիզմ է՝ այդ շենքերում ապրում են մարդիկ, ընտանիքներ, ովքեր այս քաղաքում պետք է իրենց հարմարավետ զգան: Նրանց համար Երևանը ոչ միայն պետք է հաճելի լինի, այլև աշխարհի լավագույն քաղաքը դառնա, ուր կցանկանան միշտ վերադառնալ… և այս ամենը ոչ թե հռետորական մոտեցում է, այլ զգացում ու համոզմունք, որը շատերի մեջ այսօր ուղղակի բացակայում է: Ես համաձայն չեմ այն զգայական մոտեցումներին, որ երբեմն լսվում են. «էս ի՞նչ երկիր է, թողնեմ-գնամ», «Երկիրը երկիր չի», «էստեղ ապագա չկա» և այլն: Նման դեպքերում հարց է ծագում. իսկ ո՞վ պետք է երկիրը լավը դարձնի, եթե բոլորը երկիրը լքեն կամ մտածեն այն լքելու մասին: Չէ՞ որ յուրաքանչյուր ազգ, յուրաքանչյուր երկրի քաղաքացի ինքն է մտածում իր երկիրը լավը դարձնելու մասին, այնպես որ, մեր բոլորիս խնդիրն է՝ Երևանը դարձնել համայն հայության երազանքի քաղաք: Եվ այս խնդիրը մենք լուծելու ենք…

Անահիտ Բախշյան. «Պատրաստվում եմ ավագանիում երևանցիների աչքն ու ականջը լինել»

ԱԺ նախկին պատգամավոր, Կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրեն Անահիտ Բախշյանը «Բարև, Երևան» դաշինքի ավագանու խմբակցության վեց անդամներից միակ կինն է: Ասում է՝ Երևանի ավագանիում իր համար առաջնային են լինելու կրթությանը վերաբերող հարցերը:

- Առաջին խնդիրը, որի մասին բարձրաձայնելու եմ Երևանի ավագանիում, կրթության ոլորտի ապաքաղաքականացումն է: Գերակա պետք է լինի օրենքի պահանջը, որ դպրոցները պետք է զերծ մնան քաղաքական քարոզչությունից: Դպրոցի տնօրեններն էլ պետք է ձերբազատվեն իշխող կուսակցության կրծքանշաններից, վերջապես պետք է հասկանան, թե ի՛նչ է իրենց պաշտոնը և չցուցադրեն կուսակցական պատկանելությունը:

Կարևորությամբ երկրորդը՝ բարձրաձայնելու եմ այն բոլոր խնդիրները, որոնք առնչվում են նախադպրոցական հաստատություններին: Ուշադրության կենտրոնում եմ պահելու մանկապարտեզների խնդիրը, մասնավորապես խմբերի բեռնաթափման տեսանկյունից: Նախ ուզում եմ ճշտել, թե Երևանի երեխաների քանի՞ տոկոսն է մանկապարտեզ հաճախում և ըստ այդմ առաջարկել՝ գուցե հարկավոր է, որ մանկապարտեզները շատանա՞ն: Բացի այդ, հատ առ հատ գնալու եմ այն բոլոր փաստերի հետքերով, որոնք վկայում են, որ այս կամ այն մանկապարտեզի շենքը սեփականաշնորհել են: Պետք է գնամ և իմանամ՝ դա ե՞րբ է եղել, համապատասխան օրենքն ընդունելուց առա՞ջ, թե՞ հետո…

Եվ երրորդ՝ պատրաստվում եմ Երևանի ավագանիում երևանցիների աչքն ու ականջը լինել, որպեսզի որևէ որոշում, որից պիտի

տուժի քաղաքացին, անմիջապես բարձրաձայնվի: Հրապարակային եմ դարձնելու ցանկացած բան, որ կարող է ոտնահարել երևանցիների իրավունքները…

Քաղաքական խոհանոց

«Երեւանի քաղաքապետ հենց հիմա էլ կարող է կին դառնալ, բայց»…

«Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնի ղեկավար Ահարոն Ադիբեկյանը կարծում է, որ ՏԻՄ համակարգում ղեկավար պաշտոններում կանանց ոչ բավարար ներկայացվածության հիմնական պատճառը ներքին քաղաքական խոհանոցն է …

«Ինչպե՞ս կնոջը կաշառես… կամ տանես խաշ, խորոված ուտելու, ինչպե՞ս պատիվ տաս…» - հռետորական այս հարցադրումների միջոցով սոցիոլոգը փորձում է բացատրել թե գործադիր իշխանության ներսում գոյություն ունեցող ոչ ֆորմալ հարաբերությունները խոչընդոտ են հանդիսանում կանանց համար: Բացի այդ, իր դիտարկմամբ, շատերը կողմնակից են կաշառվող ղեկավար ունենալուն, քան արդար:

Ադիբեկյանը վստահ է, որ կանայք իրականում կարող են հաջողությամբ լինել ղեկավար պաշտոններում, օրինակ՝ Երևանի քաղաքապետ հենց հիմա էլ կարող է կին դառնալ, մենք ունենք այդպիսի կանայք:

«Երբ նայում ես, թե ինչպես են աշխատում կին ղեկավարները, ապա համոզվում ես՝ կինը ձիրք ունի կառավարման: Բայց այստեղ էլ նույն՝ ոչ ֆորմալ հարաբերությունների խնդիր կա՝ քաղաքապետի ֆունկցիաները մեզանում ավելի լայն են, քան պաշտոնականն է պահանջում, այսինքն՝ քաղաքապետը պետք է պատրաստ լինի ոչ ֆորմալ դաշտում էլ գործելու»,- նշում է սոցիոլոգը՝ ավելացնելով, որ շատ դեպքերում հասարակությունը նույնիսկ չի էլ պատկերացնում՝ ի՛նչ է կատարվում իշխանության կուլիսներում:

Հարցին, թե գործում են արդյոք իր մատնանշած՝ «կադրից դուրս» հանգամանքներ տեղական իշխանության ավելի ցածր մակարդակներում, Ադիբեկյանը պատասխանում է, որ ոչ ֆորմալ մթնոլորտում հարցեր լուծելու պրակտիկան հատկապես ՏԻՄ մակարդակում է տարածված՝ հավաքվում են տղամարդկանցով, ուտում-խմում, պայմանավորվածություններ ձեռք բերում:

Նրա դիտարկմամբ, հատկապես վերջին ընտրությունների ժամանակ պարզ երևաց, որ հաճախ գյուղապետի պաշտոնում առաջադրվում են նախկին գյուղապետների կանայք կամ քույրերը, կամ էլ մայրերը, որոնք կարող են օգտագործել տղամարդկանց կողմից մինչ այդ ձեռք բերած գործնական, այդ թվում ոչ ֆորմալ կապերը:

Դիրքորոշում

Որպես կին՝ ի՞նչ կփոխեիք կամ կավելացնեիք Երևանում…

Նախընտրական շրջանում մենք զրուցեցինք Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցական ցուցակներում ընդգրկված կանանցից շատերի հետ: Ամենակարևոր հետևությունը այդ զրույցներից մեզ համար այն էր, որ իրականում կանայք և՛ ցանկություն, և՛ համապատասխան կրթություն, գիտելիքներ ու փորձ ունեն մեր կյանքում փոփոխություններ բերելու համար: Միայն թե պետք է մի փոքր ավելի շատ վստահել նրանց և, գուցե, փոխել խաղի կանոնները՝ առաջ գնալու հնարավորություն տալով նրանց…

Միշտ ասում ենք՝ «Երևանը մեր տունն է», ուրեմն ինչպե՞ս ենք պատկերացնում այդ տունն առանց կնոջ: Ու եթե հաշվի առնենք, որ կնոջ աչքից գրեթե ոչինչ չի վրիպում, ուրեմն հենց կանանց անմիջական մասնակցությամբ էլ պետք է լուծվեն քաղաքում առկա խնդիրները:

Ալեսյա Բեջանյան,
Հանրային հեռուստաընկերության «Առաջին լրատվականի» մեկնաբան, ՀՅԴ

Մենք անընդհատ շեշտում ենք, որ կենտրոնը զարգանում է, և այժմ պետք է շեշտը դնել ծայրամասերի վրա, սակայն կենտրոնում էլ վիճակը դեռ շարունակում է սարսափելի մնալ: Շենքեր կան, որոնց բակերում ուղղակի բաց տարածության վրա աղբակույտեր են, աղբահանությունը թերանում է, շքամուտքերը սարսափելի վիճակում են, վերելակներն ու տանիքները՝ նույնպես: Հարցերի հարցը շարունակում է մնալ տրանսպորտը: Ես երևի երջանիկ մարդ եմ, որ տնից աշխատանքի ոտքով եմ գալիս, սակայն երբ տեսնում եմ բերնեբերան լցված երթուղայիններն ու կանգառում սպասող տասնյակ մարդկանց, բարկանում եմ, որովհետև այս հարցը պետք է վաղուց կարգավորված լիներ:

Մարինա Մարգարյան,
բժիշկ, Երևանի պետական բժշկական համալսարանի դասախոս, ԲՀԿ

Երևանի առջև ծառացած բոլոր խնդիրներն այնքան բարձիթողի են, որ բոլորն էլ հավասար, հրատապ և համակարգային լուծումներ են պահանջում: Հարկավոր է նախ և առաջ վերջ տալ կոռուպցիային և պետական մակարդակով իրականացվող հովանավորչությանը: Միմիայն քաղաքապետարանի թափանցիկ և հաշվետու գործունեության դեպքում հնարավոր կլինի քաղաքի համար կայուն և մրցակցային զարգացում ապահովել, ինչը, անշուշտ, ողջ երկրում իրավիճակը փոխելու հեռանկար կբացի:

Եվա Թովմասյան,
«Ստարտ մեդիա» լրագրող, ՀԱԿ

Եթե ինձ հնարավորություն տրվեր, ես այլ կերպ կկանաչապատեի մեր քաղաքը, Երևանին իրոք անհրաժեշտ ծառատեսակներով…

Կվերականգնեի կինոթատրոնների, բոլոր մշակութային օբյեկտների գործունեությունը, որովհետև անընդունելի է, երբ քաղաքում միայն տոնավաճառներ են, խանութներ… Մեր ծանոթներից մեկը վերջերս մի միտք արտահայտեց, որն ինձ շատ դուր եկավ՝ Երևանը մի գեղեցիկ կտավ է, որը խզբզել են ապաշնորհ նկարիչները: Հիմա ինչքան հնարավոր է պետք է մաքրել այդ խզբզոցները: Դե, երիտասարդության պալատը հետ չես բերի, «Սևան» հյուրանոցը՝ նույնպես, բայց կարելի է դեռևս փրկել Փակ շուկան…

Սուսաննա Մուրադյան,
ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի խորհրդի անդամ, հանրային խորհրդի ենթահանձնաժողովի նախագահ, «Բարև, Երևան»

Օդայրամասերում ապրող մեծահասակների, երեխաների համար նախատեսված հանգստյան գոտիների հարցը կլուծեի … Մեկ էլ՝ կանգառների, թերթի կրպակների թիվը կավելացնեի…

Իմ ցանկություններից է նաև երևանցու քաղաքակիրթ կերպարի ձևավորումը: Իր քաղաքն իսկապես սիրող, օրենքը հարգող երևանցու մասին է խոսքը: Մայրաքաղաքի բնակիչը պետք է իր կեցվածքով, խոսքով, վարվելակերպով տարբերվի: Իսկ դրան հասնելու համար ժամանակ է պետք և դաստիարակություն՝ մանկապարտեզից սկսած:

Ջուլիետա Թադևոսյան,
Եվրոպական ակադեմիայի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, ՕԵԿ

Այս և բազմաթիվ այլ թեկնածու կանանց հետ հարազրույցներն ամբողջությամբ կարող եք կարդալ մեր WomenNet.am կայքում:

Օրակարգ

«Իսկ եթե դո՞ւք լինեիք ավագանու անդամ կամ քաղաքապետ...»

Այս հարցով մենք դիմեցինք հասարակական սեկտորը ներկայացնող կանանց՝ առաջարկելով նշել, իրենց կարծիքով, Երևանի համար առաջնային, կարևորագույն խնդիրները...

«Այսօր մենք չունենք հին Երևան, պատմություն չունենք»...

- Երևանի համար կարևորագույն խնդիրն ինձ համար էկոլոգիան է: Ոչ միայն կանաչ տարածքները, այլև տրանսպորտի խնդիրը: Այնպես կանեի, որ Երևանում ավելի մեծ չափով գործի էլեկտրական տրանսպորտը, վերականգնվի մեր կորցրած տրամվայը: Ամբողջ աշխարհն է այսօր գնում էկոլոգիապես մաքուր փոխադրամիջոցների, հատկապես որ, այն առավել էժան է:

Կցանկանամ, որ ավագանին այսուհետ մտածի նաև հին Երևանի մասին, մենք անընդհատ ասում ենք՝ նոր, ավելի նոր, ավելի բարվոք, բայց, ցավոք, այսօր չունենք հին Երևան, որը մեծ խնդիր է: Երբ զբոսաշրջիկին կամ անգամ մեր երեխաներին ուզում ենք ցույց տալ հին Երևանը, ցավոք, չենք կարողանում, այն գոյություն չունի: Կցանկանայի, որ պատմությունը վերականգնվի, և քաղաքն ունենա նաև իր հին մասը, վերագտնի իր հին դեմքը թեկուզ որևէ թաղամասի տեսքով:

Լիլիթ Ասատրյան,
«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ նախագահ

«Քաղաքը պետք է հարմար լինի բնակչին»

- Երևանի համար առաջնային խնդիրներից մեկը համարում եմ բնակֆոնդի հարցը: Այն պետք է անձնագրավորվի, քանի որ 60-ականներից կառուցված շենքերն այսօր դեռ շահագործվում են: Մենք փոքրիկ հետազոտություն էինք կատարել մոտ երկու տարի առաջ և պարզել, որ այդ շենքերը վատ վիճակում են, վթարային են, չեն նորոգվում, և տրամադրված որոշակի գումարներն էլ ուղղվում են զուտ կոսմետիկ խնդիրները լուծելուն:

Ունենք նաև այս խնդրին զուգահեռ աղբահանության, վերելակների լուրջ խնդիր: Ի վերջո, մենք պետք է հասկանանք, որ եթե ցանկանում ենք, որ բնակիչը, երևանցին շարունակի ապրել իր քաղաքում, ապա պետք է լուծվեն գոնե այս խնդիրները, քաղաքը պետք է հարմար լինի բնակչին:

Միրա Թոփուզյան,
Կանանց հանրապետական խորհրդի նախագահ

«Ամենաքաղաքակիրթ քաղաքն էլ մեծ գյուղ կդառնա, եթե...»

- Եթե ավագանու անդամ լինեի, կհավաքեի այն բոլոր պատվիրանները, որ հնչեցրել է բնակչությունը նախընտրական հանդիպումների ընթացքում, կմշակեի դրանք իրականացնելու համար առաջարկները, կբարձրացնեի այդ հարցերը ավագանու նիստերում և կփորձեի համոզել իմ բոլոր գործընկերներին՝ միանալ ինձ: Կարծում եմ՝ ավագանու անդամ ընտրված յուրաքանչյուր անձ պետք է զգա այդ պատասխանատվությունը և այդ ուղղությամբ աշխատի, քանի որ քաղաքացին չի ընտրում, որպեսզի նրանք ավագանիում իրենց համար ինչ-որ հարցերի լուծումներ տան, նրանք այնտեղ են, որ բնակչության հարցերն ընթացք ստանան:

Երևանի համար գլխավոր խնդիրներից մեկը այսօրվա մեր քաղաքի աղավաղված ճարտարապետական դեմքն է: Յուրաքանչյուր քաղաք ունի իր գլխավոր հատակագիծը, իսկ երբ ամեն մեկը, իր շահերից ելնելով, փոխում է այդ հատակագիծը, ամենաքաղաքակիրթ քաղաքն էլ դառնում է մեծ գյուղ: Հիմա մենք նման Երևան ունենք, որտեղ խախտվել են ամբողջ քաղաքաշինության սկզբունքները:

Ջեմմա Հասրաթյան,
Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ

«Աղտոտված օդ, կանաչ գոտիների պակաս, պարզապես խեղդվում ես քաղաքում...»

- Ես չէի ցանկանա առանձնացնել միայն Երևանինը, քանի որ խնդիրներ կան որ առնչվում են ողջ հանրապետությանը: Նախ, իհարկե, աղքատությունն է, սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, որին ամեն օր ենք առնչվում, նաև մեր շահառուների հետ շփվելով:

Երկրորդ խնդիրը, որ կցանկանայի առանձնացնել, շինարարական աշխատանքների ոչ ապահով կազմակերպումն է, ոչ միշտ են պահպանվում անվտանգության անգամ տարրական պահանջները:

Եվ, իհարկե, բնապահպանական խնդիրը՝ աղտոտված օդ, կանաչ գոտիների պակաս, հատկապես կենտրոնում, պարզապես խեղդվում ես քաղաքում...

Լարա Ահարոնյան,
«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ համանախագահ

«Կպահպանեի հինը՝ զուգահեռ ստեղծելով նորը»

- Առաջնային խնդիրը Երևանի համար համարում եմ քաղաքի պատմական դիմագծի, պատմամշակութային ժառանգության պահպանումը: Այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ հնարավոր է պահպանել հինը՝ զուգահեռ ստեղծելով նաև նորը: Այսօր հին Երևանը աղավաղվել է, շատ հաճախ, երբ դուրս ես գալիս քաղաք, ոչինչ չի հիշեցնում, որ Երևանում ես, քաղաքը կորցրել է իր համն ու հոտը:

Երևանի կենտրոնում հատկապես պետք է արգելվի այդ հախուռն շինարարությունը: Վերջերս նախկին Բրյուսովի ինստիտուտի շենքի վերաբերյալ, որը եզակի է և Թամանյանի նախագծով է արված, իմացանք, որ կան որոշակի պլաններ, որ այս շենքի հիման վրա ուզում են կառուցում կատարել... Հիմա նման դեպքեր շատ ունենք, ցավոք, լավագույն դեպքում համարակալում են հին քարերը, սակայն հետո անհետանում են և՛ հին քարերը, և՛ շենքերը, քաղաքն էլ կորցնում է իր դեմքը:

Նատալյա Մարտիրոսյան,
«Հայաստանի հելսինկյան քաղաքացիական ասամբլեա» ՀԿ նախագահ

«Գերխնդիրը քաղաքացիների մասնակցության հարցն է»

- Ինձ համար գերխնդիրը քաղաքացիական մասնակցության հարցն է: Կարծում եմ՝ այն կբերեր նրան, որ մեր շատ ու շատ խնդիրներ լուծումներ կգտնեին: Համայնքի ներկայացուցիչներն ավելի ակտիվ կլինեին, ու որոշումները կընդունվեին ոչ թե մեկ կամ երկու անձի կողմից, այլ համայնքն ակտիվ ներգրավված կլիներ այս աշխատանքներում: Համայնքի յուրաքանչյուր մտահոգ բնակչին հնարավորություն կտրվեր իր կարծիքը, բողոքն ու առաջարկը ներկայացնելու:

Ասֆալտապատման, ջրամատակարարման, տրանսպորտի խնդիր... որպեսզի այդ ամենը արդյունավետ լուծումներ ունենա, անհրաժեշտ է քաղաքացիների մասնակցությունը, պետք է և՛ ամբիոն, հարթակ ստեղծել, և՛ խթանել նրանց մասնակցությունը:

Աննա Նիկողոսյան,
«Հասարակություն առանց բռնության» ՀԿ ծրագրերի ղեկավար

«Կհարմարեցնեի քաղաքը բոլորի համար»

- Մատչելիության խնդիրն է ինձ համար առաջնայինը, հատկապես տրանսպորտի մատչելիությունը: Այսօր Երևանում բնակվում է հաշմանդամություն ունեցող ավելի քան 60.000 մարդ: Մարդիկ երթևեկելու, տեղից տեղ շարժվելու հնարավորություն չունեն: Որոշ մայթեր ինչ-որ չափով հարմարեցված են, որոշ մայթեր՝ ոչ, որոշ դեպքերում էլ այդ հարմարեցումը ձևական է, քանի որ իրականում պիտանի չի տեղաշարժման խնդիրներ ունեցող մարդկանց համար:

Ամենակարևորը, սակայն, տրանսպորտի խնդիրն է: Այս տարի քաղաքապետարանի ծրագրով խոստացել են, որ մայիսից հետո 10 ավտոբուս պետք է հարմարեցվի, տեսնենք, թե ինչ արդյունք կունենանք: Իհարկե, 10-ը դեռ շատ քիչ են, և պարզ չէ, թե ո՛ր ուղղությամբ են գնալու: Պարզ է նաև, որ շատ ավտոբուսներ հնարավոր չէ հարմարեցնել զուտ տեխնիկական պատճառով, և անհրաժեշտ է ներկրել հենց այդ հատուկ հարմարեցված ավտոբուսները: Իհարկե պատճառաբանում են, թե թանկ են, սակայն սա արդարացում չէ: Ի դեպ, մենք այս խնդիրների վերաբերյալ բաց նամակ էինք ուղղել ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերին:

Զարուհի Բաթոյան,
«Հույսի կամուրջ» ՀԿ հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության պատասխանատու

Պաշտոնական տվյալներով՝ 309.265 աղքատ, 206 վթարային շենք, նորերով փոխարինելու 1520 վերելակ, քաղաքի տարածքի միայն 3%-ը զբաղեցնող այգիներ ու պուրակներ, հաշմանդամություն ունեցող անձանց համար միայն 2 հարմարեցված տրոլեյբուս:

Ըստ «Սիվիլիթաս» հիմնադրամի 2013-ի հարցման՝ Երևանի 100 բնակչից միայն 2-ն են համարում, որ քաղաքը ոչ մի խնդիր չունի:

Աղբյուրը՝ CivilNet.am

Հեռագրություն

Կանայք ՏԻՄ-երում. ներկա եւ ապագա հաջողությունների գրավականը

Այս տարվա ապրիլին Ջերմուկ քաղաքում կայացած երկօրյա համաժողովում, որին մասնակցում էին Սյունիքի և Վայոց ձորի մարզերի կին ավագանիները, ամփոփվեցին 2012-ից իրականացվող «Կանանց քաղաքական հզորացման աջակցություն տեղական մակարդակում» ծրագրի արդյունքները: Նշենք, որ ծրագիրն իրականացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան համատեղ աջակցությամբ:

Ծրագրի ղեկավար Նվարդ Խաչատրյանը նշեց, որ այսօր արդեն կարելի է փաստել՝ այս ծրագիրը խթանեց կանանց քաղաքական ակտիվությունը և առաջընթաց արձանագրեց կանանց ինքնագնահատականի բարձրացման և սեփական ուժերի հանդեպ վստահության ավելացման առումով:

Մասնավորապես, Սյունիքի մարզում այս փաստն անմիջական ազդեցություն ունեցավ ՏԻՄ ընտրությունների արդյունքների վրա: 2012-ի սեպտեմբերին Սյունիքում կայացած ընտրությունների արդյունքներով՝ կանանց թիվը ավագանիների կազմում ամենամեծն է՝ 17,4 տոկոս, այն դեպքում, երբ ողջ հանրապետության կտրվածքով կանայք ավագանիներում ընդամենը 8,4 տոկոս են կազմում:

Կին թեկնածուների քաղաքական ակտիվությունն այս տարածքում մեծապես պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ այստեղ գործող ՀԿ-ներն աջակցել են կանանց՝ տարբեր նախաձեռնություններ իրականացնելով «Կանանց քաղաքական հզորացման աջակցություն տեղական մակարդակում» ծրագրի շրջանակներում: Թերևս այս փաստն անուղղակիորեն ապացուցում է, որ կանայք ՏԻՄ ընտրություններում գերխոչընդոտները հաղթահարելու խնդիր ունեն և լրացուցիչ աջակցություն ստանալու դեպքում, լինի բարոյական թե տեղեկատվական, հասնում են հաջողության:

Ըստ էության «Կանանց քաղաքական հզորացման աջակցություն տեղական մակարդակում» ծրագիրը ծառայեց իր նպատակին՝ նպաստեց ՏԻՄ ընտրություններում կանանց թվի ավելացմանը, բայց սա միայն առաջին քայլն է: Այսօր ընտրված կանայք ընտրողների և իրար հետ ակտիվ հաղորդակցվում են ծրագրի շրջանակներում ստեղծված բլոգի՝ http://womenavagani. blogspot.com/ միջոցով: Այն նպաստում է փորձի փոխանակմանը, ավագանու աշխատանքների թափանցիկությանը և համայնքային խնդիրների լուծման նոր հնարավորություններ ստեղծում: Մի խոսքով, առջևում նոր անելիքներ ու հեռանկարներ են բացվում, որոնք ընտրված կանայք կփորձեն կյանքի կոչել իրենց ամենօրյա աշխատանքով: Արդյունքները, համոզված ենք՝ չեն ուշանա:

Համարի վրա աշխատել են՝

Հասմիկ Հարությունյանը, Մարիաննա Ղահրամանյանը, Լիա Խոջոյանը, Լիլիթ Քոչինյանը, Արև Հակոբյանը, Իրինա Յոլյանը

Թողարկումը հրատարակվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի եւ Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան համատեղ աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ promediagender_arm@yahoo.com

Անցյալն ու ներկան

«Երեւանի գլխավոր գաղտնիքը սերն է»

Ռեժիսոր Տիգրան Խզմալյանը բացահայտել է այն 2007-ին իր նկարահանած «Երևանի գլխավոր գաղտնիքը» ֆիլմում, որն այսօր ավելին քան տեղին է հիշել, որպեսզի այն, ինչ արվում է ու երբևիցե արվելու է քաղաքում, նույնպես սիրով արվի.

- Փորձեցի բացահայտել Երևանի կառուցման գլխավոր գաղտնիքը՝ Ալեքսանդր Թամանյանի սերը իր կնոջ՝ Կամիլա Էդվարդսի հանդեպ: Եթե չլիներ այդ սերը, Երևանն այդքան գեղեցիկ չէր լինի: Ինձ համար կարևոր էր ասել, որ այս քաղաքի հիմքում ընկած է սերը: Եթե մենք ուզում ենք փրկել մեր քաղաքը, հայրենիքը և ունենալ ապագա, ապա չպետք է մոռանանք, որ աշխարհի ամենահզոր գործիքն այդ փխրուն և խոցելի զգացմունքն է:

Հայտնեցի գաղտնիքը, բայց էլ ավելի կարևոր է տեսնել, թե ինչպես է այդ սերը մարմին առել քարերի մեջ, ինչպես է այն դրոշմվել Երևանում... Սերը Երևանի հանդեպ միացնում է մեզ բոլորիս...